# ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՂՆԵՐԻ ԵՎ ԳՈՐԾԱՐԱՐՆԵՐԻ ՄԻՈՒԹՅՈՒՆ

Հայաստանի արդյունաբերողների և գործարարների միության ԻՆՉ ԱՆԵԼ գիտագործնական սեմինարների շարքի ս.թ. մարտին նախատեսվող *ԿԱՊԻՏԱԼԻ ՇՈՒԿԱՅԻ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ* թեմայով հաջորդ փուլի համար հայտարարում է մրցույթ: Հաղթած աշխատության հեղինակը կստանա **200,000 հզ դրամ**, իսկ երկրորդ լավագույն արդյունքը հաղթած աշխատանքի հետ մեկտեղ կտպագրվի ՀԱԳՄ և Անտարես հրատարակչության կողմից հրապարակվող հերթական ժողովածուում:

# ՀԱՅՏԱԴԻՄՈՒՄ

## ԹԵՄԱ: Կապիտալի շուկայի զարգացումը ՀՀ-ում՝ ենթակառուցվածքների ակայությունն

### 1. ՀԻՄՆԱԽՆԴՐԻ ՆԿԱՐԱԳԻՐԸ

ՀՀ-ում կապիտալի շուկան, ի տարբերություն բանկային շուկայի, չունի զարգացվածության այն աստիճանը, որ հնարավորություն ընձեռի առանց ֆինանսական միջնորդների էական գումարներ ներգրավել իրական հատված, դրանով էապես մեծացնելով ֆինանսական ռեսուրսների մատչելիությունը՝ հատկապես միջին ձեռնարկությունների համար: Շուկայի թերզարգացվածության պատճառով (օրինակ, արտահայտված ցուցակված ընկերությունների սակավությամբ) նաև նվազում է ՀՀ տնտեսության մրցացային միջավայրի գնահատականը:

### 2. ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ՆՊԱՏԱԿԸ

Հետազոտության արդյունքները հնարավորություն կտան ավելի հասցեական և թիրախային դարձնել «կոշտ» և «փափուկ» ինստիտուտների ստեղծման և կատարելագործման միջոցառումները, որոնք արդյունավետ, մատչելի և գրավիչ կդարձնեն ֆոնդային շուկայի գործունեությունը ՀՀ-ում:

### 3. ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ՇՐՋԱՆԱԿԸ ԵՎ ԱԿՆԿԱԼՎՈՂ ԱՐԴՅՈՒՆՔԸ

Հետազոտության շրջանակներում ներդրողներ ներգրավելու տեսակետից անհրաժեշտ է գնահատել՝

1) Շուկայի գործունեությունն ապահովող «կոշտ» ինստիտուտների և օրենսդրության վիճակը, և
2) Շուկայի գործունեությունն ապահովող «փափուկ» ինստիտուտների և օրենսդրության վիճակը:

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՂՆԵՐԻ ԵՎ ԳՈՐԾԱՐԱՐՆԵՐԻ ՄԻՈՒԹՅՈՒՆ

## Ակնկալվող արդյունքը

### Առաջադրանք 1. «Կոշտ» ինստիտուտներ

Պետք է գնահատել, արդյոք

1) Առկա են արդյունավետ մատչելի բորսա, դեպոզիտարիա, ներդրումային ընկերություններ, մասնագիտացված այլ կառույցներ;
2) Դրանց կարգավորումն ապահովող պետական կառույցներն ի զորու են արդյունավետորեն վերահսկել։

### Առաջադրանք 2. «Փափուկ» ինստիտուտներ

Պետք է գնահատել, արդյոք

1) Առկա են ժամանակին համահունչ «փափուկ» կառույցներ, ինչպիսիք են հաշվապահական և աուդիտորական կարգավորումներ, դրանք ապահովող մասնագիտացված կառույցներ, ֆինանսական լրատվություն և այլն։
2) Արդյոք ընկերություններն ունեն համապատասխան մարդկային կապիտալ, թափանցիկ գործավարություն և կառավարման կարողություններ՝ կապիտալի շուկայում աշխատելու։

## 4. ԼՈԳԻՍՏԻԿԱՆ ԵՎ ՏԵՎՈՂՈՒԹՅՈՒՆԸ

Ցանկալի է որ հետազոտությունը պարունակի ոչ միայն ակադեմիական գրականության ամփոփում, օրենսդրության և երկրորդային տվյալների վերլուծություն, այլև պարունակի գործարարների հետ շփման արդյունքում ձևավորված հարցադրումներ։ ՀԱԳՄ-ն կարող է աջակցել հանդիպումների կազմակերպման առումով։ Հետազոտության տևողությունը 1 ամիս է։

## 5. ԴԻՄՈՒՄԱՏՈՒԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ

### Ովքեր կարող են դիմել

Դիմողը դիմելու պահին և հետազոտության իրականացման ընթացքում պետք է լինի հայաստանյան ցանկացած բարձրագույն ուսումնական հաստատության դասախոս կամ գիտաշխատող։

### Հաղթողի ընտրությունը

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՂՆԵՐԻ ԵՎ ԳՈՐԾԱՐԱՐՆԵՐԻ ՄԻՈՒԹՅՈՒՆ

Մրցույթի հաղթողն ընտրվում է ՀԱԳՄ և համագործակցող գիտնականների կողմից կազմակերպվող մրցակցային գործընթացի միջոցով: